ները, քշում, տանում, թափում է իր դեղ-
տայի ափերը լայնացնելու:

Արեւելքում ամենանախնական շրջա-
ներից սկսեալ ջրբաժան գիծն էր ցեղերի եւ
տոհմերի կալուածների բաժանարար սահ-
մանը: Մինչեւ օրս Օսմանեան իշխանու-
թեան եւ Պարսկաստանի երկրներում ջրբա-
ժան գիծն է կազմում կալուածների սահ-
մանները: Մի որեւէ առուի մէջ շրջապա-
տից հոսած եւ այդ առուն թափուած բոլոր
ջրերը նոյն սահմանի մէջ եղած բոլոր հո-
ղերի հետ մի ամբողջութիւն է կազմում:
Արեւելքում ամէկի բարբառում քարացած է
«ախար-բախարի» միտքը, դա անփոփո-
խելի եւ անայլայլելի էր: Հետեւելով այս
պատմական աւանդութեան, Ճորոխի Աւա-
զանը մենք էլ բաժանելու ենք ջրբաժան
գծով. ո՛չ թէ բոնակալ տիրող-յափշտակող-
ների մահաճոյքով կամ սրի ճնշման տակ:

Ճորոխի Աւազանը Հայոց աշխարհին
մօտ միացած սահմանները աւելի նման է
մեր երկրին եւ որքան խորն էք մտնում,
թափանցում էք այս երկրի խորքերը եւ ա-
ւելի Սեւ ծովին մօտ՝ այնքան կերպարանա-
փոխւում է: Այրարատեան նահանգից,
Վանանդից-Բասենից Բարձր Հայք պտոյտ
կատարելուց յետոյ, երբ ճանապարհորդը
Կարնոյ սաղից (դաշտշամբ) ուղղւում է
դէպի հիւսիս-արեւելք, անցնում է Թուլի,
Թաֆթի, Կարագոռբէկի ամրոցները (Թա-